

**ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է 2011 թվականի պետական բյուջեի մարզերի մասով կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումներին**

26.09.2012

Սեպտեմբերի 25-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է ՀՀ ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի 2011 թվականի պետական բյուջեի մարզերի մասով կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումներին:

Մարզպետը ներկայացրել է մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում իրականացված ծրագրերը և 2011 թվականին Վայոց ձորի մարզին տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները: